

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

Ձ) Կոմիսսու Կարողիկոս (ԲՅՑ Թ. Գ.) :
 «Հռիփսիմեանց Անձինք (նուիրեալքն) և
 զհարցն» : Այսքան է շարականի ցուց-
 մունքը : Արդ տեսնենք ի՛նչ են տեսնում
 մեր պատմագիրները :

Կհրակոս Գանձակեցի խօսելով Կո-
 միսսու Կարողիկոսի գործունէութեան
 մասին, պատմում է թէ Հռիփսիմէի տա-
 ծարը նորոգելիս գտաւ նրանց նշխար-
 ները՝ կնքուած Ս. Գրիգոր Լուսաւորչի
 Ա Ս. Սահակի մատանիներով, ինքն էլ
 կնքեց և ամփոփեց, Վարդապետ զերգոս
 շարականաց օրացոյց հայերէն այբուբէ-
 րոք, որոյ սկիզբն է Անձինք նուիրեալքն
 (էջ 30) :

Մի թեթեւ ակնարկութիւն էլ Սեբէոսի
 մէջ կայ, որ աւելի հետաքրքիր է շարա-
 կանի բառերի նմանութեամբ :

«Ո՛ր մարգարիտ, որ ոչ ծովածին,
 այլ մարգարիտ» որ ծնեալ ՚ի թագաւորա-
 կան ազգէն և անեալ ՚ի գիրկն սրբաթեան
 և նուիրեալ Այ. որում ցանկացեալ էին
 տեսանել զքեզ արարք, և խնդաղա-
 կաթէր ՚ի սէր քո երանելին կոմիտաս :
 (Սեբէոս Եպս. ՚ի Հերակլիս, էջ 88) :

«Անձինքն աների թիւն է 36, որո-
 բական շրջանի տ. կիսուն հոյկական հա-
 մարուած չափով, որով գրած է Ս. Ներ-
 սէս Շնորհալիւի Ներսէրաշուքը :

«Այսօր զանադթիւի օրրոցն Հռիփ-
 սիմեանցն հարցի լիզուն «Անձինքն հետ
 համեմատելով կարելի է տեսլ, որ քառ
 կոմիտաս Կարողիկոսի գրչին է պատկա-
 նում :

Է) Սահակ Չորափորեցի (703 Յ. Գ.) :
 «Զխաչին», «զգնեղեցւոյ», «զկնդանա-
 դիրն» և ոչ Տէր Երկնիցն՝ «Որ զարդար-
 եաց» :

Որ Սահակ Չորափորեցի կարող է
 գրած լինիլ շարականներ, այդ բանը
 հաստատուում է հիմնաւորաւով է հետեւեալ
 հանգամանքով : Խաչի պաշտամունքը զօ-
 րանում է ութնորդ դարից սկսած և
 այնքան առաջ է գնում, որ հայերը արա-

բացոց առաջ խաչով էին պարծենում,
 Ներսէս Շնորհալի օրօք երևում է Վարա-
 քայ Ս. Նշանը Թողիկ ճգնաւորին, Այս
 առթիւ Ն. Շնորհալի առանձին տես է օտա-
 մանում, որով Ս. Խաչի տօնը մասամբ աղ-
 զայնանում է (աղգային տօն է դառնում) :

Յանկում ընդհանրապէս լինելով
 «Գրեալ զխաչին մօթն է և չի կարելի
 իմանալ թէ որդեօք բոլորն է նորա
 գրածը՝ թէ մի մասը : Այս դէպքում Ս.
 Սահակ Չորափորեցու շարականները կո-
 բող ենք որոշիլ լիզուն համեմատութեամբ :

Սորան կարելի է վերագրել «Ս. Խաչն
 օգնական» (էջ 483) : Կարծէք Ս. Խաչը
 քերթութիւնից վերադարձնելուց յետոյ եր-
 գել է «Զօրութիւն Ս. Խաչի» (էջ 488) :
 Յառաջ բերելով շարականների ցանկում
 Ս. Սահակի վերագրած «Որ զարդարեալքն
 և լիզուն հանաչելով կարող ենք մօտա-
 ւորապէս լիզունի նմանութեամբ մատնա-
 նիշ անել օրա գրչին պատկանեալները :

1. Որ զարդարեալքն մեծապայծառ փա-
 ոօք օռւոր զկնքեղեցի և լուսանձն բնա-
 կարան հարեղաց, խորան դառաւ հրեշտա-
 կաց : զնա տմենայն արարածք օրնեցէք :

2. Որ ինքնազոյ հրաշիւքն հիմնեցայց
 ՚ի վերայ հիման օռւոր առաքելոցն և
 շնորհեաց քառութիւն ՚ի սմաւ Որդաց
 մանկան վերադասիլ ըստ վերին զըւար-
 թանն, զնա տմենայն արարածք օրն-
 նեցէք :

3. Որ ամենակարող զօրութեամբն
 իւրով անճառելի ծագմամբն, աստուածա-
 պէս առատաձեռնեաց ազգի մարդկան և
 պարգեւեաց շնորհա անապական զգեա-
 պայծառադարգս և բոլորեալ պատկա յան-
 մատոյց լուսոյն, զնա ամենայն արարածք
 օրնեցէք :

Հետ այսմ, Ս. Սահակ Չորափորե-
 ցունը կարող են լինել «Ս. Խաչն օգնա-
 կան», էջ 483, «Զօրութիւն Ս. Խաչի»,
 էջ 488, «Խաչն կենարար», էջ 492, «Ու-
 բա լիւր», 494, «Ի ստանգանելն», 499,
 «Նշանաւ ամենազոյթ», 509, «Ս. զխաչ

քո», 508: Իսկ միւս բազմադամ շարականների գրութեան ժամանակը կարող ենք դնել արարական շրջանի երկրորդ կէտին:

Եթե՞նորդը գարից առաջ խաչի տան առժամանակաւ կը լինէր, որովհետեւ խաչը շորորքը գարում ընդհ. քրիստոնէական արքունիքին դարձաւ Տէրունական Խաչի գիւտով կոստանդինոսի մայր Հեղինէի ձեռքով, ապա ազգային հողի վերայ երեցած խաչը է. դարձաւ սկզբին, Ներսէս Շիրակի կողմէ և վերջապէս շարականների մէջ խորը հնութեան տիպ կրող և պարզ ու յստակ լեզու ունեցող երգեր կան, որք ցոյց են աւելի խաչի պատմական հնութիւնը: Այդ շարականներն են Քառք Ս. Խաչից՝ 489, «Գաւազան զօրութեան»՝ 491, «Քառք կենաց»՝ 486, «Խաչի քո Քո. երկրպագանիք»՝ 507, «Ապաւինեցաք 'ի խաչ քո»՝ 516: Որանք բոլորն էլ հինգերորդ դարու կարող են լինել. Իսկ Յիսուսի աւելի ուշ (Չորսփորեցուց յետոյ) են գրուած, այն ժամանակ, երբ միօրեայ տաները բազմօրեայ են դարձել:

(Ը) Ս. Յովնան Օմնեցի Իմաստասէրն (720 Յ. Ք.), զկարգ մեծ տանիցն:

Ինչն արիւնի հասկանանք զգարք մեծ տանիցն ասելով: Կ. Գանձակեցին ասում է թէ Յովնան Օմնեցին Գրիգոր Լուսաւորչի ժամանակից կարգուած տաները՝ Դաւթի մարգարէի և Յակովբայ առաքելոյ, կարգում է 225 Դեկտեմբերին . . . և երգեաց շարականն հարցին՝ «մեղաք յամենայնի», որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցին հայոց սկսեալ Ռէն թուականէն մինչև 'ի ՌՁ թուական, որ այժմ յաւուրս մեր է» (էջ 39, Կ. Գանձակեցի):

Մեծ կամ աւագ տան ասելով հասկանում ենք Ստեփանոս Նախավայի. Որդւոցն Որոտման, և այս այն պատճառով, որ առաջ այն տաներն են մասն եկեղեցու մէջ. առջա թուած կարելի է դասել և երկոտասան՝ առաքելոց տանը, Աստուածածնի և Ս. Խաչի տաները: Հ. Չամչեանը՝ աւագ տաների մէջ է նշում Պետրոսի և Պողոսի տանը, բայց եւ կարծում եմ այս տաները կարգուել են Ն. Շնորհալու ժամանակ, իսկ առաջ երկոտասան առաքե-

լոց տանի մէջ մտնում էին, առանց անշատուելու Պետրոսի և Պողոսի տանը:

Հ. Չամչեանը իւր պատմութեան երկրորդ հատոր, գիրք երրորդ, էջ 396-397, թուելով մեծ տաները ասում է, որ «բոլոր մեծ տաների շարականները սա (Յովն. Օմնեցին) է յորինել, և ասում է. «Գանձակեցին սխալուել է, որ փոխանակ ասելու բաց 'ի «մեղաք»ից բոլորը Յովն. Իմաստասէրն է յորինել, գրում է «մեղաք»ը իմաստասէրն է գրել, որովհետեւ «մեղաք»ը շատ անողի երգ է»: Բայց ես կարծում եմ սխալը Հ. Չամչեանն է, որովհետեւ Գանձակեցուն ինչ որ յայտնի է՝ նա է յինչ:

Յովնան Իմաստասէրին է Անսկիգը բանդ Աճ», որ ցանկում սխալմամբ Յովն. Մանդակունուն է վերագրուած, որը իբրեւ Համբարձի երգուելիս է եղել բոլոր մարտիրոսաց տաներին, բայց այժմ միայն Հոսիսիմեանց տանին է երգուում:

Հաստատուելն ընդունելով, որ «Մեղաք»ը Յովն. Օմնեցունն է, ուստի լեզուի և ժողովրդի համեմատութեամբ կարող ենք ասել իր մեծ համարուած տաների երգերից էլ ո՞րն է սորոնը կամ սորան ընծայել: Յառաջ բերենք վերոյիշեալ շարականը.

1. Մեղաք յամենայնի և զպատուիրանս քո ոչ պահեցաք. այլ խոտտովանիմք առ քեզ, մի՛ անտես առնիր, այլ գթա 'ի մեզ, Աճ հարցն մերոց:

2. Վասն Դաւթի սիրելւոյ քո և Յակովբայ արդարոյն աղաչեմք զքեզ, մի՛ անտես առնիր, այլ գթա 'ի մեզ, Աճ հարցն մերոց:

3. Որ նստիս 'ի քրօքս և հայիս յանդունդս, յիշեալ ողորմութեամբ քո գիւտիք և աղօթիւք սրբոյն Յակովբայ խնայեա 'ի մեզ Աճ հարցն մերոց:

4. Որ ընտրեաց զերանչիւն գիւտիք յառաջնորդութիւն Խարայելի. օրհ. . .

5. Որ կացոյց զսքանչելին զՅակովբ, պարիսպ չըջապաւ եկեղեցւոյ իւրոյ. օրհնեցէք, բարձր արարէք զիս յաւիտեան:

Որքան պարզ և իմաստաւի երգ. հապա ինչո՞ւ անպիլի չէ Հ. Չամչեանի դատաւարութիւնը:

Իմաստասէրիկն՝ «Անսկիգը բանդ Աճ», որի մասին խօսք եղաւ, երբ սա

ցանկում վերագրուած էր Յովհ. Մանգա-
կունուն: Առաջիկայ և նոխարկայ (էջ
84), «Որդիքն Որոտման» (էջ 94):

Թ) Ստեփանոս Սիւնեցի Բ. (728 Յ. Բ.),
գՍրբութիւն Սրբոցն, Խաչին, զոր ոմանք
Ստեփանոսի Մոկաց եպիսկոպոսին տան՝
որ Ապարանցի ևս կոչի:

Ստեփանոս Սիւնեցի Երկրորդի մասին
ճիշդ է յիշատակութիւն կայ թէ երգ է
գրել, բայց թէ ի՞նչ երգ՝ յայտնի չէ:
Ե. . . և ՚ի վերայ թարգմանութեանն արոր
և երգս հոգեորս քաղցր եղանակաւ շա-
րականս և կցորդս և այլ երգս» (կիրա-
կոս Գանձակեցի, էջ 40):

Այս շարականի (Սրբութիւն Սրբոց)
տնիքի սկզբնատառերը կազմում են ա-
նունս Ստեփանոս, բայց թէ ո՞ր Ստեփա-
նոս, Սիւնեցի՞ն թէ Մոկացին, որոնցից
առաջինը ութնորորդ և վերջինս տասնե-
րորդ դարու անձինք են:

Լիզուին նոյնիով՝ չենք կարող այս
շարականը ութնորորդ դարու համարել,
վասնզի սա ութնորորդ դարու լիզուն և
ոճն չունի, այլ աւելի շատ տասնորորդ
դարու է, ինչպէս իրաւամբ էլ վերա-
գրուած է Ստեփանոս Մոկացուն՝ որ տաս-
նորորդ դարու անձ է:

Ստեփանոս Մոկացունը լինելու հա-
մար վկայում է և Ստեփանոս քահանայի
մի ոտանաւորը, որը շարական յօրինող-
ների վերայ է գրուած: Մի հանգամանք
էլ կայ, որով աւելի հաստատուած է այս
շարականի փ. դարում գրուած լինելը:

Այդ ժամանակ զօրացել էր Պաւլիկեան
աղանդը, որ արհամարհում էր խաչի
պաշտամունքը, որոյ դէմ մաքառում էին
Եկեղեցու վարդապետները խօսքով և դըր-
չով. ուստի ժողովրդի մէջ աւելի զօրա-
ցնելու համար խաչի պաշտամունքը սկսե-
ցին խաչի վերայ շարականներ գրել,
նորա պաշտամունքը աւելի ամբապնդե-
լու. հէնց այս ժամանակին կարելի է վե-
րապահել խաչի վերայ գրուած շարական-
ներից շատերը, որոնք մենք դրինք ա-
րարական լիզուի տիրապետութեան երկ-
րորդ կիսին: Այս շարականի մէջ աշխա-
տել է խաչի ստուգական պատկերը Հին
Ուխտի մէջ տեսնել և ակնարկում է խաչի
դէմ մաքառողներին, ճշոպ անհաւատից»
անունանկով վերջիններին:

Հ. Չամչեանը խօսելով Ստեփանոս
Մոկացու մասին, ասում է, թէ Հայերը
Յունաց Վասիլ և Կոստանդին կայսրնե-
րից խնդրել էին Կենաց Փայտից մի մասն,
որը ամենայն ուրախութեամբ ուղարկում
են ասկեպատ խաչի մէջ, որը ստանալիս
մեծ տօնախմբութիւն են կատարում, հա-
ւանական է համարում, որ այս երգը նոյն
օրը յօրինուած և երգուած լինի Ս. Մո-
կացուց: Այս մասին մանրամասն տես
Չամչեան, Բ. հատոր, էջ 855-857: Բայց
ևս կարծում եմ հայերը այնքան կրօնա-
սէր էին, որ իսկական Կենաց Փայտի մեծ
մասը ձեռք բերած կը լինէին շատ վաղ,
որին ապացոյց են այն բազմաթիւ մաս-
ները, որք գտնուած են մեր շատ վան-
քերում և եկեղեցիներում:

(Շարունակելի՝ 8)

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ

